ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 15-Ն

<< 14 >> Ապրիլի 2020 թվական

Անուշավան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 48-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 4-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 11-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 48-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.Ծախսային մաս

1) Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 1, խումբ 1, դաս (Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում) ծրագրի և տնտեսագիտական դասակարգման (ապահովագրական ծախսեր) 4215 հոդվածի <<30,0>> թիվը փոխարինել <<71,0>> թվով:

2) Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 (պահուստային ֆոնդ) ծրագրի և տնտեսագիտական դասակարգման (պահուստային միջոցներ) 4891 հոդվածի <<9052,4>> թիվը փոխարինել <<8811,4>> թվով:

3) Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 08, խումբ 2, դաս 3 (Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ) ծրագրի և ծախսերի տնտեսագիտական դասակարգման (Այլ ընթացիկ դրամաշնորհներ) 4639 հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<200,0>> թվով:

4) Բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման «Ընդամենը վարչական ծախսեր» տողի <<58198,4>> թիվը փոխարինել <<61564,4>> թվով,

5) Բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման «Ընդամենը ծախսեր» տողի «Ընդամենը» սյունակի <<60714,0>> թիվը փոխարինել <<64080,0>> թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

		Կողմ-7	Դեմ-0	Ձեռնպահ-0
Բալոյան Կառլեն	կողմ	----------	----------	----------
Կարոյան Աշոտ	կողմ	----------	----------	----------
Հակոբյան Ռոզա	կողմ	----------	----------	----------
Մարտիրոսյան Ռուզաննա	կողմ	----------	----------	----------
Մովսիսյան Արման	կողմ	----------	----------	----------
Սոսյան Ռուստամ	կողմ	----------	----------	----------
Վարդանյան Անդրանիկ	կողմ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՐՎԱՆԴ ՀԱԿՈԲՅԱՆ

«14» ապրիլի 2020 թվական
Անուշավան համայնք